« 12 » նոյեմբեր 2026թ. No 6680 - Ա

«ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի Մանկաբուժության թիվ 1 ամբիոն) «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 35 տեսական և 82 գործնական կրեդիտ. դասավանդողներ Կարինե Սիմոնյանին՝ ՇՄՋ 18 տեսական և 44 գործնական կրեդիտ, Մուրադ Գրիգորյանին՝ ՇՄՋ 17 տեսական և 38 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010583101

Շաբաթ 1		
Օր 1		
09:00-10:00	**Դասախոսություն** Մակության շրջանները և մանկական բուժքրոջ դերը: Երեխայի հիմնական ֆիզիկական և հոգեբանական կարիքները: Երեխայի հիվանդության նկատմամբ արձագանքի տարիքային առանձնահատկությունները: Հոսպիտալացման ազդեցությունը երեխայի և ընտանիքի վրա:	Մուրադ Գրիգորյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Բուժքրոջ հաղորդակցումը տարբեր տարիքի երեխաների և նրանց ծնողների կամ խնամողների հետ: Ծնողի ներգրավումը երեխայի խնամքին:	Մուրադ Գրիգորյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • երեխայի և ծնողի հետ հաղորդակցման իրավիճակներ, • տարիքին համապատասխան վարքի և ակտիվության գնահատում, • հոսպիտալացված երեխայի հիմնական կարիքների բացահայտում, • երեխայի վիճակի վերաբերյալ դիտարկումների ճիշտ գրանցում և փոխանցում (բժշկին տեղեկատվության փոխանցման կառուցվածք՝ SBAR սկզբունքով):		
Օր 2		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
11:00-11:20	Ընդմիջում	

11:20-12:20	**Դասախոսություն** Հիվանդ մանկան առաջնային գնահատում:	Մուրադ Գրիգորյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
14:30-15:30	**Դասախոսություն** Երեխայի աճի և զարգացման գնահատումը	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • կատարել տարբեր տարիքի երեխաների մարմնաչափումներ, • նշել երեխայի աճի ցուցանիշները աճի ստանդարտ քարտերի վրա, • նկարագրել վաղ տարիքի երեխաների զարգացման հիմնաքայլերը և զարգացման անհանգստացնող նշանները, • տվյալների փոխանցումը բժշկին:		
Օր 3		
09:00-10:00	**Դասախոսություն** Երեխայի արագ գնահատումն անհետաձգելի իրավիճակներում	Մուրադ Գրիգորյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Երեխայի բուժօգնությունը անհետաձգելի իրավիճակներում	Մուրադ Գրիգորյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • գնահատել երեխայի հիմնական կենսացուցանիշները, • արագ գնահատել երեխայի ընդհանուր տեսքը, շնչառական աշխատանքը և մաշկային արյունաշրջանառությունը, • տեսակավորել կլինիկական իրավիճակը՝ սովորական, անհետաձգելի և արտակարգ: • «Ի՞նչն է փոխվել երեխայի վիճակի մեջ» կարճ կլինիկական դեպքերի քննարկում:		
Օր 4		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Փոքր երեխայի խնամք, սնուցում և անվտանգություն (տարիքային առանձնահատկություններին համապատասխան խնամք, կերակրման գնահատում, կերակրման դժվարություններ, փսխում, լուծ, ջրազրկման վաղ նշաններ, հեղուկի ընդունման վերահսկում, մեզի քանակի/հաճախականության դիտարկում, անվտանգ քուն, ասպիրացիայի կանխարգելում, ընկնելու և վնասվածքների կանխարգելում, ծնողի կրթում)	Մուրադ Գրիգորյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • ջրազրկման գնահատում, • intake/output-ի գրանցում, • երեխայի սնուցման դիտարկում, • անվտանգ խնամքի վերաբերյալ ցուցումներ ծնողին, • «վտանգի նշանների» ճանաչման վարժություն:		

Օր 5		
09:00-10:00	**Դասախոսություն** Տենդ, ցավ, ցնցումներ:	Մուրադ Գրիգորյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Դեղորայքի անվտանգ կիրառում	Մուրադ Գրիգորյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • գնահատել մանկան ճիչը և ներկայացնել ճչացող մանկանը հանգստացնելու եղանակները, • նկարագրել վաղ տարիքի երեխաների հիմնական վարքագծային խնդիրները, • խորհրդակցել ծնողների հետ ջերմող երեխայի խնամքի վերաբերյալ, • ճիշտ հաշվարկել հակաջերմային դեղերի դեղաչափերը, ցուցաբերել առաջին բուժօգնություն մանկան ֆեբրիլ ցնցումների դեպքում, • 5–6 դոզայի հաշվարկային խնդիրներ տարբեր տարիքային երեխաների համար:		
Շաբաթ 2		
Օր 1		
09:00-10:00	**Դասախոսություն** Առողջ նորածին. նորմալը ճանաչելու հիմքը:	Կարինե Սիմոնյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Նորածինների խնամքի կազմակերպման հիմնական սկզբունքները:	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • նորածնի ընդհանուր գնահատում, ջերմաստիճանի չափում, շնչառության գնահատում, կերակրման դիտարկում, • ծնողի խորհրդատվություն, • անվտանգ քնի ցուցադրում, • սքրինինգների իրականացման/ուղղորդման գործընթացի ծանոթացում:		
Օր 2		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Անհաս և ցածր քաշով նորածին:	Կարինե Սիմոնյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
14:30-15:30	**Դասախոսություն** Անհաս նորածնի խնամքի առանձնահատկությունները	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • գեստացիոն տարիքի և ծննդյան քաշի դասակարգում, • անհաս նորածնի հիմնական պարամետրերի մոնիթորինգ, • ջերմակարգավորման միջոցառումներ, • կերակրման կազմակերպում, • անհաս նորածնի վտանգի նշանների ճանաչում:		
Օր 3		
09:00-10:00	**Դասախոսություն**	Կարինե Սիմոնյան

	Նորածնի շնչառական խանգարումներ:	
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Պերինատալ ասֆիքսիա:	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • համառոտ նկարագրել նորածնի ասֆիքսիան, շնչառական խանգարումները, • կազմակերպել այդ խնդիրներով նորածինների խնամքը և սնուցումը:		
Օր 4		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Նորածնային դեղնուկ և վարակ:	Կարինե Սիմոնյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • բիլիռուբինի չափման գործընթաց, • ֆոտոթերապիայի ժամանակ երեխայի խնամք, • նեոնատալ վարակների և սեպսիսի դեպքերի քննարկում:		
Օր 5		
09:00-10:00	**Դասախոսություն** Նորածնային ռեանիմացիա և անհետաձգելի միջամտություններ:	Կարինե Սիմոնյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Նորածնային ռեանիմացիա և անհետաձգելի միջամտություններ (շարունակություն):	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • ներկայացնել նորածնի վերակենդանացման միջոցառումների համակարգը և ABC սխեման, • նկարագրել օքսիգենոթերապիայի սկզբունքները և եղանակները:		
Շաբաթ 3		
Օր 1		
09:00-10:00	**Դասախոսություն** Դպրոցական և դեռահաս տարիքի երեխայի առողջության գնահատում:	Կարինե Սիմոնյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Դպրոցահասակ երեխաների և դեռահասների հիմնական առողջական խնդիրները:	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • նկարագրել դպրոցահասակ երեխաների և դեռահասների առողջության պահպանման հիմնական գործոնները, վարքագծային խնդիրները, հիվանդացության և մահացության ռիսկի գործոնները:		
Օր 2		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան

11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Մանկական տարիքի ալերգիկ հիվանդություններ: Անհետաձգելի բուժօգնությունը երեխայի ծանր ալերգիկ ռեակցիաների (կոկորդի այտուց, անաֆիլաքսիա) դեպքում	Կարինե Սիմոնյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
14:30-15:30	**Դասախոսություն** Երեխայի մաշկի խնամքն ատոպիկ դերմատիտի դեպքում	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • ճանաչել ալերգիաների կլինիկական դրսևորումները, կենսավտանգ ալերգիկ վիճակները, • ցուցաբերել անհետաձգելի բուժօգնություն երեխայի ծանր ալերգիկ ռեակցիաների դեպքում, • խորհրդակցել ծնողների հետ ատոպիկ դերմատիտով երեխայի մաշկի խնամքի վերաբերյալ:		
Օր 3		
09:00-10:00	**Դասախոսություն** Երեխաների շնչառական համակարգի առանձնահատկությունները	Կարինե Սիմոնյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Երեխաների շնչառական համակարգի ախտահարումների հիմնական դրսևորումները, հետազոտման մեթոդները	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • նկարագրել մանկան շնչառական համակարգի հիմնական առանձնահատկությունները՝ բացատրելով այդ գիտելիքների գործնական կարևորությունը, • ճանաչել շնչառական համակարգի ախտահարումների հիմնական դրսևորումները, • մասնակցել շնչառական հիվանդությունների ժամանակ կիրառվող քույրական միջամտություններին (ՇՀ հաշվարկ, պուլսօքսիմետրիա, թոքերի լսում, երեխայի նախապատրաստում տեսապատկերային և թոքային ֆունկցիոնալ հետազոտություններին, բկանցքի և քթըմպանի քսուկ, ստրեպ թեստ, քրտինքի թեստ, ինհալացիոն թերապիա, ֆիզիոթերապիա), • ցուցաբերել անհետաձգելի բուժօգնություն կրուպի, ասթմայի նոպայի ժամանակ:		
Օր 4		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Երեխաների սուր շնչառական վարակները: Շնչառական վարակներով հիվանդ երեխայի խնամքի սկզբունքները: Անհետաձգելի բուժօգնությունը ասթմայի նոպայի դեպքում:	Կարինե Սիմոնյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան

Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • նկարագրել մանկան շնչառական համակարգի հիմնական առանձնահատկությունները՝ բացատրելով այդ գիտելիքների գործնական կարևորությունը, • ճանաչել շնչառական համակարգի ախտահարումների հիմնական դրսևորումները, • մասնակցել շնչառական հիվանդությունների ժամանակ կիրառվող քույրական միջամտություններին (ՇՀ հաշվարկ, պուլսօքսիմետրիա, թոքերի լսում, երեխայի նախապատրաստում տեսապատկերային և թոքային ֆունկցիոնալ հետազոտություններին, բկանցքի և քթըմպանի քսուկ, ստրեպ թեստ, քրտինքի թեստ, ինհալացիոն թերապիա, ֆիզիոթերապիա), • ցուցաբերել անհետաձգելի բուժօգնություն կրուպի, ասթմայի նոպայի ժամանակ:		
Օր 5		
09:00-10:00	**Դասախոսություն** Իմունականխարգելում, պատվաստումների ազգային օրացույցը:	Կարինե Սիմոնյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Պատվաստման գործընթացը:	Կարինե Սիմոնյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Կարինե Սիմոնյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • ծանոթություն իմունականխարգելման ազգային ծրագրին, • մասնակցել պոլիկլինիկայում պատվաստման գործընթացին:		
Շաբաթ 4		
Օր 1		
09:00-10:00	**Դասախոսություն** Հաճախադեպ մանկական խնդիրների ճանաչում և խնամք:	Մուրադ Գրիգորյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Երեխաների խնամքը փսխումների և փորլուծության դեպքում:	Մուրադ Գրիգորյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • կլինիկական դեպքերի քննարկում, • մասնակցել մարսողական խանգարումների ժամանակ կիրառվող քույրական միջամտություններին, գնահատել երեխայի ջրազրկման աստիճանը, հաշվարկել հեղուկների դեֆիցիտը:		
Օր 2		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Արյունաբանական խնդիրներ. գունատություն, արյունահոսություն և անեմիա:	Մուրադ Գրիգորյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
14:30-15:30	**Դասախոսություն** Արյունաբանական խնդիրներ. գունատություն, արյունահոսություն և անեմիա (շարունակություն):	Մուրադ Գրիգորյան

Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • կատարել արյան նմուշառումներ տարբեր հետազոտությունների նպատակով, • արյունահոսող երեխայի դիտարկում, • արյունազեղումները ճանաչելու վարժություններ նկարներով :		
Օր 3		
09:00-10:00	**Դասախոսություն** Սրտանոթային համակարգ. վտանգի նշանների ճանաչում:	Մուրադ Գրիգորյան
10:00-10:10	Ընդմիջում	
10:10-11:10	**Դասախոսություն** Սրտի բնածին և ձեռքբերովի հիվանդություններ	Մուրադ Գրիգորյան
11:10-11:30	Ընդմիջում	
11:10-15:30	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • սրտի հաճախության, զարկերակային ճնշման, SpO_2 -ի չափում, ցիանոզի գնահատում, • երեխայի ընդհանուր վիճակի գնահատում • ՍԲԱ-ով երեխայի վիճակի վատթարացման դեպքերի քննարկում:		
Օր 4		
09:00-11:00	**Գործնական աշխատանք**	Մուրադ Գրիգորյան
11:00-11:20	Ընդմիջում	
11:20-12:20	**Դասախոսություն** Երեխաների միզասեռական համակարգը, ախտահարումների հիմնական դրսևորումները, հետազոտման մեթոդները:	Մուրադ Գրիգորյան
12:20-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	**Գործնական աշխատանք**	
14:30-15:30	**Դասախոսություն** Ներզատական ֆունկցիայի մանկական առանձնահատկությունները: Երեխաների հաճախադեպ ներզատական խանգարումները:	Մուրադ Գրիգորյան
Գործնական աշխատանքի ընթացքում նախատեսվում է. • մեզի նմուշի հավաքում, • դիուրեզի մոնիթորինգ, • գլյուկոմետրիա, • կլինիկական դեպքերի քննարկում:		
Օր 5		
09:00-13:00	**Ամփոփիչ գործնական գնահատում ըստ կայանների**	Մուրադ Գրիգորյան
13:00-13:20	Ընդմիջում	
13:20-15:30	**Ամփոփիչ թեստային գնահատում**	Մուրադ Գրիգորյան